ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Հ Ր Ա Մ Ա Ն

13 մարտի 2018 թվականի N 53 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N 4-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի N 1400-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կանոնադրության 12-րդ կետի <<դ>> ենթակետով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1.Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի 2018 թվականի հունվարի 17-ի <<2018 թվականի ընթացքում ըստ ջրօգտագործողների ընկերությունների պետական ֆինանսական աջակցության չափաքանակները հաստատելու մասին>> N 4-Ա հրամանի հավելվածով հաստատված աղյուսակի 1-ին տողի <<Երևան>> ՋՕԸ-ի պետական ֆինանսական աջակցության չափաքանակի <<100,000.0>> թիվը փոխարինել <<87,000.0>> թվով, 4-րդ տողի <<Արմավիր>> ՋՕԸ-ի պետական ֆինանսական աջակցության չափաքանակի <<1,470,000.0>> թիվը փոխարինել <<1,441,000.0>> թվով, 7-րդ տողի <<Թալին>> ՋՕԸ-ի պետական ֆինանսական աջակցության չափաքանակի <<450,000.0>> թիվը փոխարինել <<415,000.0>> թվով, 8-րդ տողի <<Կոտայք>> ՋՕԸ-ի պետական ֆինանսական աջակցության չափաքանակի <<280,000.0>> թիվը փոխարինել <<267,000.0>> թվով, իսկ 11-րդ տողի <<Տավուշ>> ՋՕԸ-ի պետական ֆինանսական աջակցության չափաքանակի <<255,000.0>> թիվը փոխարինել <<245,000.0>> թվով: Միաժամանակ հրամանի հավելվածի աղյուսակում ավելացնել 15-րդ տող <<Էջմիածին>> ՋՕԸ <<100,000.0>> պետական ֆինանսական աջակցության չափաքանակով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2018թ. մարտի 13

Երևան